

նել . բայց պատուհաններ ալ ունի , որոնց մէջ ուխտաւորները կեցած՝ իրենց աղօթքը կ'ընեն : Մասմէտին քով թաղուած են նաև իր երկու բարեկամները , որ իր առաջին խալիֆէները կամ յաջորդներն եղան : Թէ որ ուխտաւոր մը Սիւննի աղանդէն ըլլայ , Մասմէտին հոգւոյն համար աղօթք ընելէն ետե՛ կ'աղօթէ նաև երկու խալիֆէներուն հոգւոյն . բայց թէ որ Շիի աղանդէն ըլլայ՝ որ չեն ընդունիր ան խալիֆէները , միայն Մասմէտին համար աղօթելէն վերջը՝ մէկդի կ'երթայ : Արկրթէ վանդակէն կախուած էին՝ Սահապիներուն կողպտելէն առաջ՝ հարիւր հատ ոսկի կանթեղ , ու միշտ վառած կը մընային . Մասմէտի գերեզմանին ու քովի եղած մզկիթին պահպանութիւնը յանձնուած է քառասուններքինիներու , որոնց ընտրութիւնը թագաւորական դռնէն կ'ըլլայ , և կ'ըսուին Քարալ կամ աւելածու . ասոնք կարգաւ՝ ձեռուընին նիզակով պահպանութիւն կ'ընեն գերեզմանին ու մզկիթին :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՀՈՎԻԳ ԸՐԱԿՍ

Ի լէն երկնի քայնի առաքիտի մանկանց :

ՍԵՎՈՒՍԻ յընկերակցացն 'ի զառ 'ի վեր փոքու բլրակին ոչ ինչ կարի 'ի բացեայ յիւրմէ խրճիթէն՝ նստէր վարանական հովիւն Սէհենդակ , և խաչինք նորա լուիկ շուրջ գային զնովալ : Սիրտ իւր անդուլ 'ի հիւզ անդր ձգտէր՝ ուստի ելն զայն օր յոչ կամաց , և առ 'ի պէտս ևեթ հօտին , և աչք իւր խորշէին իմն դառնալ ընդ այն կողմն հայել . հատանէր անցանէր ըզձիւքն ընդ անձուկ հովիտն որ անջրպետէր ընդ հիւզն և ընդ բլուրն , և յահէն ընկրկեալ մնայր . զի հիւան-

դագին եթող յանկողնի զՕարմուհի զամուսինն իւր . « Աւ տակաւին , ա սէր 'ի տրամութեան իւրում , տակաւին ոչ ոք 'ի մանկաւոյն երևեցաւ . գուցէ դարձեալ զայրացան խիթք անհնարին ցաւոյ Օարմուհեայ , և չկամիցին որդիքն քեցել 'ի ցանկալի մօրէն . գուցէ և ինքնին առ գութ ինչ չկամիցի տրամեցուցանել զիս , և վասն այնորիկ չարձակիցէ զմանկունսն . . . Մհա ոչ բազում ժամք են յորմէ հետէ թողի զմայրն և զորդիս 'ի լաց 'ի միասին , և թուիմ յաւուրց բազմաց անջատեալ հեռացեալ 'ի նոցանէ . . . Յարուցեալ երթայց տեսից զողջոյն նորա . . . այլ ո՛ւմ թողից զհօտն , զի ոչ ոք է աստ յընկերաց իմոց . և ընդ իս տանել զիւրդ լինիցի , զի ինքնին Օարմուհի թախանձեաց զիս և ասէ . երթ դու Սէհենդակի իմ , արածել զխաչինսն , և մի դարձցիս այսր մինչև յիջանել ստուերաց . և որ բնակէն յերկինս տեսցէ վասն իմ . բայց եթէ կոչ առ յինէն հասցէ քեզ . . . Մոռացան արդեօք մանկունք զպատուէրն զոր ետու նոցա գաղտ ծանուցանել ինձ . . . Այլ զինչ որ շարժինդ անդանօր 'ի հեռաստանէ . միթէ նոքա՞ , որդեակքն իմ . . . բայց ոչ , ստուերք են ծառաստանին . . . Մնաս Մստուած , եթէ երբէք հաճոյ եղեն քեզ նուէրք անդրանկաց օգեացս զոր մատուցանէի քեզ , եթէ ամօքեցին զունկն քո համբերատար հեծութիւնք Օարմուհեայ , և քաղցր մաղթանք որդեկաց իմոց , պահեա զնա աղաչեմ կենդանի մինչև իցեմ ես . պահեա մատաղ որդեկաց իմոց զմայրն իւրեանց բարի . . . պահեա Մստուած , զօրհնութիւն տան իմոյ , զառաքիտի զաղախին քո . . . Այլ ծածկեալ զերեսս իւր ուլենեալն ելաց լալիւն մեծ . և իբրև անապան ուրեմն զաչան յետին ցողով արտասուաց 'ի վեր յերկինս ուղղէր , ասա ետես , և ոչ ևս պատիրք աչաց ,

ոչ ևս ստուերք ծառոց, այլ զուարթունք մի թարք ամայու թեան իւրոյ, չարմիկ և Սամիկ սիրելիք, կայտաւմանկունք դեռատիք, որոց ձեռն 'ի ձեռն տուեալ, և 'ի մեծէ ուստեք 'ի կրից երագեալ, որպէս էրկարծել զանբաւականսն յայնքան ընթացս զփափուկ գարչապարսն, զթուխ գիսակս յուսնն ծեծելով, և զցիր բազմութիւն համասպրամ ծաղկանց առ ոտն կոխելով, մերթ անկեալք գլորեալք և մերթ յարուցեալք և կանգնեալք, մերթ ծածկեալք 'ի պարարտարօտ մարգան և մերթ 'ի վեր երեւեալք, և անցեալք նախ ընդ խորն և ապա ընդ զառ 'ի վեր հովտին, և ընդ բովանդակ կարմրորակ դէմնն և ընդ հօլանի լանջնս վիժակս ջերմն քրտանց հոսեցուցեալ, թասելով և կայթելով ելին հասին արկին զանձինս 'ի գիրկս հօրն իւրեանց, և “ չարմիկ, մայր մեր, մայր մեր . . . ”

Եւ այլ ինչ արտաբերել ոչ կարէին՝ հատկեալ ձայնիցն և շնչոյն։ Իսկ Սեհենդակայ զերկոսին միանգամայն զփոքրկունսն 'ի գոգ ժողովեալ, “ Օրնչ իցէ, զի եղև մօր ձերում, հարցանէր ստեպ, ասացէք որդեակք իմ, ասացէք փութով։

— Սայր մեր ապաքինեաց, լուծան 'ի սպառ խիթք ցաւոց նորա, և այժմ քեզ սպասեալ մնայ հայր։

Համբուրել զորդեակն և յառնել, գումարել զհօտն, տալ զաջ իւր 'ի չարմիկ և զձախն 'ի Սամիկ և դէմ դնել 'ի հիւղն, զայն ամենայն միոյ վայրկենի գործ արար Սեհենդակ ընթանայր և ընթացուցանէր զմանկունսն, և հարցանէր. “ Եթէ գիտիցէք մանկունք, որով օրինակաւ զերծաւ մայր ձեր 'ի սաստիկ ցաւոցն։

— Եւ կարի իսկ քաջ, ասէ չարմիկ. թող պատմեսցէ քեզ Սամիկ, մինչ ես հաւաքեցից ձեպով ծաղկունս ինչ մօր մերում և քեռ։

Եւ Սամիկ ասէ. “ Սինչ դուն բաժանեցար 'ի մէնջ հայր լալով ընդ առաւօտն, և մեք բոլորեալ զմահ-

ձաւ մօր մերոյ լայաք, Վաջաջ եղբայր մեր եղեալ էր զձակատն 'ի սնարս բարձին, և զերեսս իւր ծածկեալ անշարժ կայր, և քոյր մեր առնմին, և մեք մի աստի և մի անտի աղօթեաք լուռ. և ահա յանկարծ յարեաւ Վաջաջ, և մեզ ինչ ոչ ասացեալ ել արտաքս. բայց զդառնալն ոչ անագանեաց՝ բերեալ ընդ իւր բռամբն բանջար ինչ խոտոյ, զորմէ ասէր թէ քննեալ և 'ի վերայ հասեալ էր յառաջագոյն, զի յորժամ ցաւս ինչ ունիցին գառինքն՝ խնդրեն զայն և ուտեն և բժշկին. զայն վաղվաղակի տուեալ քեռ մերում եռացուցանել 'ի ջուր աղբերն, և ջերմանջերմն արբոյց մօր մերում, մինչդեռ շոգի բովանդակ ծածկէր զերեսս նորա առ 'ի մէնջ. էարբ, հայր, և 'ի քուն եղև անդորր, քան զի մեր արտաքս ելեալ և աղօթեաք անձայն առ այն զոր Սամահ կոչես դու, և մայր մեր՝ Վարձրեալ. և իբրև ժամք երկու անցին՝ կոչեաց զմեզ քոյր մեր 'ի ներքս 'ի սենեակն, և ահա մայրն նստեալ էր կանգուն 'ի մահձին և օրհնէր զՎաջաջ, զի յաղօթել իւրում առ Սամահ անկեալ էր 'ի սիրտ նորա ելանել զխոտոյն և բերել զգեղն կենդանատու։ Իսկ մեք այն ինչ համբուրեալք 'ի նմանէ, փութացաք առ քեզ . . .

— Եհա նա ինքն մայր մեր, գուչեաց չարմիկ, և թափեալ զձեռս իւր յաջոյ հօրն՝ ընթացաւ 'ի գիրկս Օարմուհեայ. որոյ յեցեալ 'ի Վաջաջ և 'ի դուստրն իւր կայր 'ի սեամս հիւղին, և ողջունէր 'ի հեռուստ զՍեհենդակ։ Ենդ առ հասարակ ծնողացն և որդւոց գիրկս զմիմեամբք արկեալ օրհնէին զտուիչն կենաց և առողջութեան. և մանկտեակքն առեալ փունջս փունջս ծաղկանց սրբուէին ընդ օդս և 'ի գլուխս մօրն իւրեանց և քեռ։ Վաջաջ միայն 'ի լուր օրհնութեանց հօրն և գովեստից առաքինութեան իւրոյ շիկնեալ կայր 'ի թիկանց Օարմուհեայ. քանզի

այսպէս բնաւորեալ էր պարկեշտն աւաքինուծիւն 'ի դարս անդ հարցն մերոց՝ զծաղկանց բերել զտիպ, որ էծ է գլխովին բացեալ յերևան ածիցեն զպայծառուծիւն իւրեանց հանգէպ ականն արևու, 'ի մօտոյ իսկ գունաթափ լինին և զբաւին յանուշահոտ բուրմանէն . իսկ ընդ մայրենի տերևօքն քօղարկեալ, անվթար պահին 'ի գեղն : Բայց Սէհենդակայ արտաքս զնա ձգեալ և գիրկս ածեալ անդրանկանն իւրում, եզ զձեռս իւր 'ի գլուխնորա . 'ի վեր հայեցաւ և ասէ .

« Դուիցեն երկինք հանապազ առաքինւոյ սրտին Բաջաջայ, և յաւելցեն Օարմուհեայ այդպիսի որդիս » :

— Եւ հօրն ևս իւրեանց նմանակս, յաւել պարկեշտուհին :

— Կեցցեն ծնողք մեր անձկալիք,՝ գոչեցին միաձայն որդիքն չորեքին :

— Յաւերժ կեցցեն անբիծք և անարատք մանկունք մեր,՝ կրկնեցին շրթունքն ծնողականք :

Եւ իբր 'ի բազմանուագ գործեաց միաձայնուծիւն երգոց՝ ուխտ ամենեցուն սրտից առ հասարակ վերանայր սլանայր ընդ երկինս :



**Քրանսլինին Բարոյական առածները :**

ԳԻՏԵՆՍ Ինչու համար քու դրացիդ երկու տեսակ կերակուր կ'ուտէ, ու դուն չոր հացով կ'ապրիս : — Ասն զի անիկայ խանուծը նստած՝ բանին գործին հետ էր, ու դուն կամ դեռ պառկած էիր, կամ զբօսօնքի՝ խաղի հետ էիր : Աւշ ձամբայ որ ելլես՝ հարկաւ պէտք է որ վազելով քալես . անով շուտ կը յոգնիս ու քիչ գործք կը տեսնես :

Ղարտարուծիք բաղդին աջ ձեռքն է, չափաւորուծիւնը ձախ ձեռքն է :

Օ ուարձուծիւնը իրմէ փախչողին ետևէն կը վազէ :

Ըմէն շուայուծենէ աւելի ցաւալի է՝ ժամանակի կողմանէ շուայլ ըլլալը . ժամանակը ազնիւ թել մըն է որ անով մեր կեանքը կը հիւսուի :

Քանի որ կեանքերնիս առաջ երթալու վրայ է, ծուլուծիւնը այնպէս ծանր ու կաղալով կը քալէ որ աղքատուծիւնը շուտ մը վրայ կը հասնի, թէպէտ և առաջ շատ հեռու ըլլար :

Յուսով ապրողը՝ նեղուծեամբ կը մեռնի . անոր համար ով որ ժառանգուծիւն չունի՝ տասը մատովը թող աշխատի որ ստակ գտնէ :

Երկին համար ամէն բան դժուար է . գործունէին առջևը արգելք չկայ :

Ղարտար մարդը իր պարտքերը կը վճարէ . վախկոտը վրայէ վրայ կը դիզէ :

Երկը եզներն ու արօրը կը ծախէ, գործունեայ մարդը գինին ու պատուական բերքերը :

Կուզես իմանալ թէ ինչ է ստակ ըսածդ . ուրիշէն քիչ մը բան փոխ առ, ու կը տեսնես թէ որչափ նախատեսաց ու նեղուծեանց մէջ կ'իյնաս, անանկ որ հազիւ կրնաս ազատիլ :

Ով որ շատ պարտք կ'ընէ, իր ազատուծիւնը ձեռքէն կը հանէ, ու հազար նեղուծեան մէջ կ'իյնայ :

Ընելի աղէկ է իրիկունը առանց կերակուր ուտելու պառկիլ, քան թէ առաւօտը պարտքով ելլել :

Բանը ծախքերը երբոր շատնան մեծամեծ ժառանգուծիւններ կը հատցընեն :

Ընելորդ բաներ գնողը՝ հարկաւորները կը հարկադրի ծախելու :

Ստակ մը ծախելէդ առաջ մատուրներուդ մէջ մէյմը պտըտցուր, ու մտածէ թէ որչափ աշխատեր ես անիկայ վաստըկելու :

Կուզես որ գործքդ առաջ երթայ, անձամբ գնա . չես ուզեր նէ՝ ուրիշը խրկէ :

Տիրօջ աչքը ձեռուրներէն աւելի բան կը տեսնէ :

Քիչը կրկնուելով կը շատնայ : Գատարկուծիւնը ժանգ մըն է որ